ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր, Գիտություններ Երկրի մասին, 2012, 65, № 3, 89-91

ՎԱՐԴԳԵՍ ԹՈՐԳՈՄԻ ՀԱԿՈԲՅԱՆ
(ծննդյան 80-ամյակին)
(1932 – 1975)

Լրացավ հնէաբանության և շերտագրության բնագավառներում ճանաչված գիտնական, հայկական երկրաբանական դպրոցի փայլուն ներկայացուցիչ, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի բաժնի վարիչ, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր **Վարդգես Թորգոմի Հակոբյանի** ծննդյան 80-ամյակը: Նա կյանքից հեռացավ ընդամենը 43 տարեկան հասակում՝ թողնելով մի պատկառելի գիտական ժառանգություն:

Վ.Հակոբյանը ծնվել է 1932թ. օգոստոսի 15-ին Լճաշեն գյուղում: 1949թ. ավարտելով Սևանի միջնակարգ դպրոցը, նա ընդունվում է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետ, որը գերազանցությամբ ավարտում է 1954թ. և շարունակում ուսումը Հայաստանի ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի ասպիրանտուրայում: Երկարատև գործուղումների ընթացքում Լենինգրադ (Ս-Պետերբուրգ), նա մեծ դպրոց է անցնում ճանաչված մասնագետներ, ԽՍՀՄ ԳԱ թղթ.-անդամ Վ.Պ.Ռենգարտենի, պրոֆեսորներ Վ.Ֆ.Պչելինցևի, Ն.Պ.Լուպպովի, Ա.Ա.Աթաբեկյանի և այլոց մոտ: 1958թ. Լենինգրադի պետական համալսարանում փայլուն պաշտպանում է “Հարավարևելյան Զանգեզուրի յուրայի և կավճի նստվածքների շերտագրությունը” թեկնածուական ատենախոսությունը և ստանում երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Վ.Հակոբյանի հետազոտությունները նվիրված էին յուրայի և կավճի ժամանակաշրջանների շերտագրության և հնէաբանության խնդիրներին: Աշխատանքում իր կողմից հայտնաբերված և նկարագրված ղեկավարող բրածո ֆաունայի հիման վրա մշակվել էր շերտագրական նոր սխեմա և կազմվել շրջանի 1:50000 մասշտաբի նոր երկրաբանական քարտեզ:

Վ.Հակոբյանի Հայաստանի տարածքում կատարված շուրջ 20 տարիների մանրակրկիտ հետազոտությունների արդյունքներն ամփոփվեցին “ՀՍՍՀ վերին կավճի նստվածքների կենսաշերտագրությունը և փորոտանիները” եռահատոր դոկտորական ատենախոսության մեջ, որը նա 1973թ. փայլուն պաշտպանեց Լենինգրադում,

Համամիութենական գիտահետազոտական երկրաբանական ինստիտուտի (ВСЕГЕИ) գիտական խորհրդի նիստում: Նրա պաշտոնական ընդիմախոսները՝ Հայաստանի ԳԱ ակադեմիկոս Կ.Ն.Պաֆենհոլցը, Վրաստանի ԳԱ ակադեմիկոս Ա.Լ.Ցագարելին և պրոֆեսոր Ն.Պ.Լուպպովը, ընդգծելով աշխատանքի հիմնարար բնույթը, նշեցին նաև, որ ատենախոսության երեք հատորներից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է ավարտուն աշխատություն և կարող է պաշտպանվել որպես ինքնուրույն դոկտորական ատենախոսություն:

Աներևակալի են Վ.Հակոբյանի կողմից կատարված հետազոտությունների ծավալները և ստացված արդյունքները: Ուսումնասիրվել են մոտ 11 հազար բրածո ֆաունայի նմուշներ, նկարագրվել են ուշ կավճի դարաշրջանի փորոտանիների 2387 տեսակ, 74 սեռ և 29 ընտանիք, որոնցից հնէաբանական գրականության մեջ առաջին անգամ առանձնացված և նկարագրված են 69 տեսակ, 30 սեռ և 5 ընտանիք: Իրականացված հիմնարար հետազոտությունները Վ.Հակոբյանին թույլ տվեցին մշակել փորոտանիների նոր դասակարգում, առանձնացնել նոր տաքսոններ, առաջարկել մի շարք ընտանիքների զարգացման ֆիլոգենետիկ սխեմաներ և հիմնավորել փորոտանիների 10 տարբեր հասակային համալիրների առկայությունը: Վ.Հակոբյանը մշակեց նաև Հայաստանի տարածքի վերին կավճի ժամանակաշրջանի ռեգիոնալ կենսաշերտագրական սխեման, կատարեց նրա համահարաբերակցությունն Անդրկովկասի հարակից շրջանների, ինչպես նաև Միջերկրածովային և Միջին Եվրոպական հնէակենսաշերտագրական մարզերի հետ:

Ուսումնասիրելով և վերլուծելով վերին կավճի հնէաբանությանը և շերտագրությանը վերաբերող համաշխարհային գրականությունը, Վ.Հակոբյանը ներկայացրեց ողջ Երկրագնդի ուշ կավճի դարաշրջանի ծովային ավազանների հնէակենսաաշխարհագրական շրջանացման սխեման, առաջին անգամ առանձնացնելով ինքնուրույն՝ Աֆրո-Հարավամերիկյան մարզ: Վ.Հակոբյանի աշխատանքը շերտագրության և հնէաբանության ասպարեզում նախադեպը չունեցող հիմնարար մի հետազոտություն էր, որը մասնագետների կողմից հիրավի համարվեց “հնէաբանական գիտության խոշոր ձեռքբերում”:

Վ.Հակոբյանը նաև գիտական աշխատանքների հմուտ կազմակերպիչ էր: Նրա նախաձեռնությամբ և ղեկավարությամբ 1974թ. լույս տեսավ “ՀՍՍՀ բրածո ֆաունայի ատլաս” ծավալուն (60տ.մ.) մենագրությունը, որի 31 հեղինակների թվում էին ոչ միայն Հայաստանի, այլ նաև Մոսկվայի և Լենինգրադի հնէաբանները, որոնք տարբեր տարիների համապատասխան աշխատանքներ էին կատարել Հայաստանի տարածքում: Դա բացառիկ մի աշխատություն է, որում բերված է Հայաստանի տարածքի վերջին 200մլն տարիների ժամանակաշրջանի բրածո ֆաունայի ղեկավարող շուրջ 800 ձևերի նկարագրությունը, ինչը հիմք է հանդիսանում համապա-

տասխան շերտերի հասակային ստորաբաժանման և երկրաբանական մասնագիտական քարտեզների կազմման համար:

Վ.Հակոբյանը Համամիութենական շերտագրական մշտական հանձնաժողովի անդամ էր, ուներ լայն ճանաչում և մեծ հեղինակություն էր վայելում ինչպես նախկին ԽՍՀՄ, այնպես էլ Լեհաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, ԱՄՆ, Ճապոնիայի, Չեխոսլովակիայի հնէաբանների շրջանում: Նա շուրջ 40 տպագիր գիտական աշխատությունների, այդ թվում՝ 7 մենագրությունների հեղինակ և համահեղինակ էր:

Վ.Հակոբյանը վախճանվեց ծանր հիվանդությունից հետո, 1975թ. ապրիլի՝ 22-ին, իր ստեղծագարծական կյանքի ամենածաղկուն շրջանում՝ թողնելով բազում անավարտ գիտական մտահղացումներ և ամենաջերմ հիշողություններ իրեն ճանաչողների սրտերում: Նա արտակարգ աշխատասեր, համեստ, ազնիվ, ընկերներին նվիրված և միաժամանակ իր հանդեպ խստապահանջ անձնավորություն էր: Վ.Հակոբյանի կարճ, բայց չափազանց բեղմնավոր գործունեությունը գիտությանն անվերապահ նվիրումի փայլուն օրինակ է, իսկ նրա աշխատությունները դեռ երկար տարիներ իրենց պատվավոր տեղը կզբաղեցնեն երկրաբանական գիտության շտեմարանում:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ,
ՀՀ ԳԱԱ “Գիտություններ Երկրի մասին” տեղեկագրի խմբագրություն